# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

**24 փետրվարի 2014 թվականի N 13-Ա**

**ք. Հրազդան**

## Հ. ԱՍԱՏՐՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 34-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2014 թվականի փետրվարի 17-ի N 59-Ա որոշման և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հրազդանի N 7 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման խորհրդի 2014 թվականի փետրվարի 7-ի N 1 (35) որոշումը՝ **կարգադրում եմ.**

1. ***Համիկ Ասատրյանին*** 2014 թվականի փետրվարի 24-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հրազդանի N 7 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր տնօրեն՝ նրա հետ կնքելով աշխատանքային պայմանագիր հինգ տարի ժամկետով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ եռօրյա ժամկետում կազմակերպել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության <<Հրազդանի N 7 միջնակարգ դպրոց>> պետական ոչ առևտրային կազմակերպության հանձնման-ընդունման աշխատանքները:

3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Կ. ՇԱՀԳԱԼԴՅԱՆ